

հազար չորս հարիւր տրամ է. մին դանթարն հարիւր լիպրայ է. հարիւր լիպրէն եօթն զիտր եւ կէս է. մին լիպրէն հարիւր եւ ութսուն տրամ է. կ'ուզէ իմանայ թէ իւր բովանդակ ապրշուժն քանի զիտր է. յառաջ կու գրէ զբովանդակ ապրշուժի լիպրայն. եւ եօթն եւ կէսով կու բազմացնէ. այս բազմացուցած թվէս չորս գիր կու կըտրէ. ձախ կողմի մնացած զիտր է. աջ կողմի մընացածն թէ գիր լինի. քսան եւ չորսով կու բազմացնէ եւ երկու գիր կու կտրէ. եւ կ'իմանայ թէ քանի տրամ է» : (Էջ 143-44) :

Հոս կուտամ արդի հայերէնով իմ թարգմանութիւնս :

«Մարդ մը կ'ուզէ Եւրոպա մետաքս ծախել : Մետաքսը լիտրով կը ծախեն եւ կշիւով կը չափեն : Մէկ լիտրը երկու հազար չորս հարիւր տրամ է, մէկ կշիռը հարիւր լիպրայ է, հարիւր լիպրան եօթնուկէս լիպր է, մէկ լիպրան հարիւր ութսուն տրամ է : Կ'ուզէ գիտնալ, որ իր ամբողջ մետաքսը քանի՞ լիտր է»... եւ այլն :

Աւելորդ չեմ սեպեր հոս տալու նաեւ այս հատորիկին յիշատակարանը.—

«Աւարտեցաւ պիտանցու եւ շահաւէտ զըրզուկս համարողութեան ի փառս մեծագոյնս ա(ստուծո)յ եւ ի վայելումն հանուրց հայկազունեաց վաճառականաց յամի ներ մարմնութեան Տեառն. 1675 Նոյեմբերի ամսոյ 21. ի Մարշիլեայ քաղաքի ի հայրապետութեան ա(եառ)ն Յակոբայ հայոց Կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Լուսովիկոսի չորեքտասաներորդի արքային Փրանցիդաց : Արդ որք օգտիք սովաւ յիշեցէք զմատակարարս սորին եւ զաշխատօսս եւ մանաւանդ զհանգուցեայն ի Քս. զՈսկան վարդապետն, եւ զազատոհմս նորին բնաւս. ընդ որս եւ զուք յիշեցեալք լիջիք ի Քրիստոսէ աստ եւ ի հանդերձելումն. Ամէն» : (Էջք 145-6) :

Ինձ ծանօթ միւս երկու վաճառականական հայ Ժէ-գարեան հրատարակութիւնները կատարուած են Ամսդերտամ : Ասոնցմէ հնազոյնն է՝

«Քանալի համատարած աշխարհացուցին մերոյ նորածնի. զոր ի լոյս էած հայկական

տառիւ վեհանձն եւ սրբափայլ հայրն մեր տէր Թօմաս աստուածազգեստ բարունին վանանդեցի, եւ առաքելադործ եպիսկոպոսն սրբոյ Սաշին : Շարադրեցեալ ի Ղուկասէ ապաշընորհ ջահընկալէ վանանդեցւոյ : Տպիւք եւ ծախիւք Թօմասու վարդապետի : Շարադրութեամբ քաջ գպրի տեառն Մատթէոսի ներհուն տպագրի Հայոց : Յամի տեառն 1696 յԱմսդեբօլտամի» :

Իսկ աշխարհացոյց տախտակը, որուն կ'ակնարկուի հոս, կը կոչուէր «համատարած մեծ» եւ ունէր սա հայերէն եւ լատինատառ յիշատակութիւնը.—

«Նորոգ քանդակ գեղեցկավէպ հանրաշահ, Փոխարեբեաց Թոմա յեսնորդ ոստ վանանդեան .

Փորագրութիւն յոյժ ցանկալի .
 Ի ձեռն ազրարց հարազատի,
 Ազրիանու Լսկօնպէկի
 Եւ Պետրոսի քաջափարժի .
 Ընդ Ղուկասու հրմտագունի
 Երկամբ բազմօք յայտ ածողի
 Եզրօր որդի իմ անդրանկի
 Պահեսցէ զնա յիւրում ծոցին :
 ՅԱմսդերտամ, 1695» :

Hadrianus et Petrus Damianus Schoonebeck fratres faciebant, Amstelodami MDCXCV (1695)

Դարձեալ Ամսդերտամ կը տպուի՝ Գանձ. չափոց, կշռոց, թուոց եւ դրամից բոլոր աշխարհի : Որ է գիտութիւն ամենայն տեսակ կըշռոց, չափոց եւ դրամից, որով բոլոր աշխարհի վաճառականութիւնն վարի : Ժողովեալ եւ ի մի վայր հաւաքեալ աշխատութեամբ Ղուկասու՝ ապաշնորհ ջահընկալի Վանանդեցւոյ : Ծախիւք եւ ի ինզրոյ հայցման Զուղայեցի Սաշատուրի որդի պարոն Պետրոսին : Տպիւք եւ հաւանութեամբ եռամեծ վեհի Թօմա վարդապետի, եւ սրբափայլ եպիսկոպոսի տանն Գողթնեաց : Ամսդերտամ, 1699» :

Այս հատորին է, որ կ'ակնարկէ Յարութիւն Տէր Յովհաննանց, երբ Զուղայեցի վա-